ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք
Հասցե-գ.Ղուրսալի (098586276)
էլ. փոստ ghursali.lori@mta/gov.am

02.05.2017թ.
թիվ 054/33

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու թիվ 09 և թիվ 10 որոշումները:

Տեխնիկական սխալների պատճառով կրկին անգամ Ձեզ եմ ներկայանցնում Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու թիվ 07 որոշումը:

Առդիր 4 թերթ:

Ղուրսալի համայնքի
ղեկավար՝ Մ.Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ղուրսալի համայնք, հասցե գ.Ղուրսալ
Հեռախոս 098586276,
էլ.փոստghursali.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » ապրիլի 2017 թվականի N 09

ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՏԱՆ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ 2017թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1313-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին 16.02.2017 թվականի թիվ 153-Ն որոշման 5-րդ հավելվածի 3.2 կետով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետը.

Ղուրսալի համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ կառավարության կողմից հատկացված 4 000 000 /չորս միլիոն/ ՀՀ դրամը ուղղել Ղուրսալի համայնքի բնակչուհի Նելլա Սերգեյի Հայրապետյանի 5 /հինգ/ անձից բաղկացած ընտանիքին բնակելի տուն գնելու համար:
2. Համայնքի ղեկավար Միհր Հրաչի Մինասյանին՝ կնքել պայմանագիր Նելլա Սերգեյի Հայրապետյանի հետ անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ազգանուն, Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Վ.Չիլինգարյան			
Դ.Մինասյան			
Ա.Մարտիրոսյան			
Ա.Ազրյան			
Վ.Կարապետյան			

Ղուրսալի համայնքի

ղեկավար՝ Մ.Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ղուրսալի համայնք, հասցե գ.Ղուրսալ
Հեռախոս 098586276,
էլ.փոստghursali.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » ապրիլի 2017 թվականի N 10

ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ,,ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ,, ՓԲԸ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 594-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով ՀՀ կառավարության նիստի 28.04.2016 թվականի թիվ 16 արձանագրությունը՝

Ղուրսալի համայնքի ավագանին որոշում է.

1. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-068-0190-0002 ծածկագրի 0.0197 հա էներգետիկայի,տրանսպորտի, կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Անտառային 1 հասցեի ջրընդունիչը
2. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-068-0191-0006 ծածկագրի 0.0184 հա էներգետիկայի,տրանսպորտի, կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Ղարաչոբան 4 հասցեի ջրընդունիչը
3. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-068-0191-0005 ծածկագրի 0.0153 հա էներգետիկայի,տրանսպորտի, կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Ղարաչոբան 1 հասցեի ջրընդունիչը
4. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-068-0190-0003 ծածկագրի 0.0059 հա էներգետիկայի,տրանսպորտի, կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Անտառային 2 հասցեի ջրընդունիչը
5. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող,կադաստրային քարտեզի 06-068-0191-0003 ծածկագրի 0.0153 հա էներգետիկայի,տրանսպորտի,

կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Ղարաչոբան 2 հասցեի ջրընդունիչը

6. Ղուրսալի համայնքի սեփականություն հանդիսացող,կադաստրային քարտեզի 06-068-0191-0004 ծածկագրի 0.0055 հա էներգետիկայի,տրանսպորտի, կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտվող Ղարաչոբան 3 հասցեի ջրընդունիչը

Նվիրաբերել «Լորի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:

7. Առաջարկել Ղուրսալի համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվածկարգով «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության և համայնքի միջև կնքել նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ազգանուն, Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Վ.Չիլինգարյան			
Դ.Մինասյան			
Ա.Մարտիրոսյան			
Ա.Ազրյան			
Վ.Կարապետյան			

Ղուրսալի համայնքի

ղեկավար՝ Մ.Մինասյան